Հաստատված է Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի 2014 թվականի
փետրվարի 26-ի գիտական խորհրդի նիստում

Ռեկտոր Ռուբեն Միրզախանյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՐԳ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն Կարգը ՀՊՄՀ չափորոշիչ է, որը սահմանում է մագիստրոսների հետազոտական աշխատանքը, նրա կազմակերպման և ղեկավարման կարգը, նկարագրում աշխատանքի բովանդակությունն ու կառուցվածքը, հաշվետու փաստաթղթերի կազմն ու պահանջները, մասնավորում մագիստրոսների հետազոտական աշխատանքը ըստ կիսամյակների, մագիստրոսների ավարտական որակավորման աշխատանքին(ատենախոսությանը) ներկայացվող պահանջները, պաշտպանության ընթացակարգն ու ժամանակացույցը:

Ծրագիրը մշակված է Եվրոպական և ազգային որակավորումների շրջանակի, ՀՀ « Կրթության մասին », «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքների համաձայն, բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Սույն չափորոծիչներով սահմանված պահանջները տարածվում են ՀՊՄՀ-ում բոլոր մասնագիտություններով ուսուցանվող մագիստրոսների վրա:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ա/ ՀՊՄՀ -ի մագիստրատուրան որպես բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման երկրորդ կրթական աստիճան, կրթական վերջնարդյունքում ակնկալում է պատրաստել մասնագետներ, որոնք հմտորեն տիրապետեն հատուկ մասնագիտական ոլորտին, իմանան մասնագիտական շրջանակներում հետազոտության նորագույն մեթոդներն

ու տեխնոլոգիաները, գիտենան նորագույն տեսությունները և դրանց մեկնաբանությունները, տիրապետեն հետազոտական մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները, ունակ լինեն ներդրում կատարելու տվյալ մասնագիտական առարկայական ոլորտում ՝ ատենախոսության աշխատանքի շրջանակներում:

Կրթական, հետազոտական /տեսագործնական և մանկավարժական/ բաղադրիչների համադրումը, թույլ է տալիս պատրաստել մագիստրոսներ, որոնք ունեն անհրաժեշտ կոմպետեցիաներ՝ լուծելու բարդ մասնագիտական խնդիրներ:

բ/ Բարձրագույն մասնագիտական կրթության բնութագրիչներին համապատասխան՝ ՀՊՄՀ-ում մագիստրոսների պատրաստման հիմնական ծրագիրը կազմված է ուսումնական և հետազոտական բաղկացուցիչներից:

Մագիստրոսի հետազոտական աշխատանքը ներառում է՝

- հետազոտական աշխատանք կիսամյակի ընթացքում,
- հետազոտական պրակտիկա,
- մանկավարժական պրակտիկա,
- ատենախոսության պատրաստում և պաշտպանություն:

I. ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ա/ ՀՀ Որակավորումների ազգային շրջանակին համաձայն ուսանող-մագիստրոսների ԲՄԿ կրթական ծրագրում մասնագիտական պատրաստման հետազոտական աշխատանքերի ընդհանուր ծավալը կախված է մագիստրոսական ծրագրի կատարման մասնագիտական յուրահատկությունից:

բ/ Կիսամյակի ընթացքում հետազոտական աշխատանքը հանդիսանում է մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ելքային արդյունքների, համապատասխան մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման և ձեռքբերման պարտադիր բաղկացուցիչ:

գ/ Հետազոտական աշխատանքը ուղղված է մագիստրոսների մոտ ինքնուրույն տեսական և գործնական դատողությունների և եզրակացությունների հանգման, գիտական տեղեկատվության օբյեկտիվ գնահատականի ձեռքբերման ունակության զարգացմանը, գիտահետազոտական որոնումների ազատությանը և կրթական և հետագա գործունեության մեջ ձեռք բերած գիտելիքների հետազոտական կիրառման անհրաժեշտությանը:

դ/ Հետազոտական աշխատանքը բոլոր մագիստրոսների համար նախանշում է ընդհանուր ծրագիր, ինչպես նաև, կոնկրետ առաջադրանքի կատարման ուղղված անհատական ծրագիր:

ե/ Մագիստրոսների հետազոտական աշխատանքը, որպես կանոն, անցկացվում է մասնագիտական ամբիոնում, հնարավոր է նաև այլ գիտահետազոտական և կրթական հաստատություններում, գիտահետազոտական կենտրոններում:

2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇ ԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ա/ Հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն է մագիստրոսի մոտ մասնագիտական ոլորտում ձեռք բերած գիտելիքների առարկայացման, հետազոտական, վերլուծական, ստեղծագործական մոտեցման ունակությունների ձևավորումն ու զարգացումը:

բ/ Հետազոտական աշխատանքը ուսումնառության ընթացքում ըստ կիսամյակների իրականացվում է ուսանող մագիստրոսների կողմից գիտական ղեկավարի ղեկավարությամբ: Մագիստրոսի հետազոտական աշխատանքի ուղղությունը որոշվում է մագիստրոսական ծրագրին և մագիստրոսական ատենախոսության թեմային համապատասխան:

գ/ Հետազոտական աշխատանքի խնդիրներն են հանդիսանում՝

- մագիստրոսների մասնագիտական հետազոտական մտածողության ու մտածելակերպի, հիմնական մասնագիտական խնդիրների հստակ պատկերացումների ձևավորումը,
- տեղեկատվության հավաքագրման, մշակման և ստացված փորձագիտական տվյալների մշակման, մեկնաբանման, ժամանակակից տեխնոլոգիաները կիրառելու ունակությունների ձևավորումը, հետազոտությունների ժամանակակից մեթոդներին տիրապետելը,

- կթական գործընթացում անհատական հետազոտական հետագծի բովանդակության նախագծման և իրականացման պատրաստվածության ձևավորումը,
- մասնագիտական ինքնակատարելագործումը, նորարարական մտածողության և ստեղծագործական պոտենցիալի զարգացումը, մասնագիտական վարպետությունը,
- հետազոտական և մանկավարժական գործունեության ընթացքում խորը մասնագիտական գիտելիքներ պահանջող խնդիրների ինքնուրույն ձևավորումը և լուծումը,
- ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությամբ մատենագիտական աշխատանքների անցկացումը:

դ/ Մագիստրոսական ծրագիրը իրականացնող ամբիոնը, սահմանում է մագիստրոսի պատրաստման հատուկ պահանջներ ըստ ծրագրի հետազոտական մասի: Հատուկ պահանջների շարքին են դասվում.

- գիտելիքի տվյալ ճյուղի ժամանակակից հիմնախնդրի տիրապետում,
- հետազոտվող գիտական ուղղության մեջ կոնկրետ պրոբլեմի, նրա տեղի ու դերի, զարգացման պատմության իմացություն,
- մագիստրոսների կողմից հետազոտվող հատուկ գիտելիքների առկայություն ըստ հետազոտական ծրագրի,
- մագիստրոսական ծրագրի հետ կապված հետազոտությունները, փորձագիտական աշխատանքները գործնականում իրականացնելու կարողություն,
- սկզբնաղբյուրների և ինտերնետի կոնկրետ ռեսուրսների հետ աշխատելու կարողություն:

3. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ա/ Հետազոտական աշխատանքի բովանդակությունը չափագրվում է մագիստրոսական պատրաստումը իրականացնող ամբիոնի կողմից: Հետազոտական աշխատանքը կիսամյակի ընթացքում կարող է իրականացվել հետևյալ ձևերով.

- հետազոտական աշխատանքների իրականացում ամբիոնի պետական բյուջետային, դրամաշնորհային, պայմանագրային հետազոտական ծրագրերի գիտահետազոտական աշխատանքների շրջանակներում՝ գիտատեսական նյութի հավաքագրում, վերլուծություն, էմպիրիկ տվյալների հավաքում, փորձագիտական և էմպիրիկ տվյալների մեկնաբանում,
- մասնակցություն համալսարանի, ֆակուլտետի, ամբիոնի գիտական, գիտագործնական կոնֆերանսներին, կլոր սեղաններին, քննարկումների անցկացմանն ու կազմակերպմանը,
- ինքնուրույն գործնական աշխատանքների անցկացում, ինչպես նաև կլոր սեղանների անցկացում ըստ գիտական ճյուղի նորագույն արդի հիմնախնդրների,
- մասկանցություն գիտահետազոտական աշխատանքների մրցույթներին,
- ինքնուրույն հետազոտության իրականացում ըստ գիտական ճյուղի նորագույն արդի հիմնախնդրների մագիստրոսական ատենախոսության սահմաններում,
- ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ մատենագրական աշխատանքների անցկացում,
- սեփական հետազոտական հոդվածների ձևակերպում,
- դիագնոստիկ նյութերի մշակում և փորձարկում,
- կատարված աշխատանքների արդյունքները հաստատված պահանջներին համապատասխան հոդվածների ներկայացում:

բ/ Հետազոտական աշխատանքի կատարման ձևերի ցանկը մագիստրոսների համար ուսման առաջին և երկրորդ տարիների ընթացքում կարող է լինել հստակեցված և լրացված՝ կախված մագիստրոսական ծրագրի յուրահատկությունից: Գիտական ղեկավարը համաձայն մագիստրոսական ծրագրի, կազմում է անհրաժեշտ հետազոտական աշխատանքի ցանկը և մագիստրոսների տվյալ հետազոտական աշխատանքում մասնակցության աստիճանը ուսումնառության ամբողջ ընթացքում:

գ/ Յուրաքանչյուր կիսամյակում ուսանող-մագիստրոսների հետազոտական աշխատանքի բովանդակությունը պլանավորվում է մագիստրոսի անհատական ծրագրում: Մագիստրոսների հետազոտական աշխատանք պլանը ուսումնասիրվում, քննարկվում, անհրաժեշտության դեպքում վերամշակվում է մագիստրոսի գիտական ղեկավարի կողմից, հաստատվում է ամբիոնի կողմից և

ամրագրվում յուրաքանչյուր կիսամյակում հաշվետվության մեջ ըստ կատարած փաստացի աշխատանքի:

4. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ա/ Մագիստրոսների հետազոտական աշխատանքը կատարվում է մագիստրատուրայում ուսուցման ամբողջ ընթացքում: Ուսման առաջին տարվա ընթացքում այն իրականացվում է միաժամանակ ուսուցման գործընթացի հետ, ուսման երկրորդ տարվա ընթացքում ՝ մագիստրոսական ատենախոսությունը գրելու ընթացքում:

բ/ Հետազոտական աշխատանքի հիմնական փուլերն են հանդիսանում.

- Հետազոտության անցկացման հաստատության/վայրի ընտրություն և փոխհամաձայնեցման ձեռքբերում ՀՊՄՀ-ի և վերջինիս միջև,
- Հետազոտական աշխատանքի պլանավորումը.
- տվյալ ոլորտում հետազոտական աշխատանքների թեմաների հետ ծանոթացում,
- մագիստրոսի կողմից հետազոտության թեմայի ընտրությունը,
- հետազոտական աշխատանքի անմիջական կատարում,
- հետազոտական աշխատանքի անցկացման պլանի հստակեցում ստացված արդյունքների համաձայն,
- հետազոտական աշխատանքի մասին հաշվետվության կազմում,
- մագիստրոսական աշխատանքի նախապաշտպանություն
- կատարված աշխատանքի հրապարակային պաշտպանություն.

գ/ Մագիստրոսների կողմից հետազոտական աշխատանքի պլանավորումը ըստ կիսամյակների արտացոլվում է մագիստրոսի հետազոտական աշխատանքի անհատական պլանում:

դ/ Մագիստրոսական ծրագրի *առաջին կիսամյակում* սովորող մագիստրոսների հետազոտական աշխատանքի արդյունքը հանդիսանում է հետազոտության թեմայի ընտրությունը, ընտրած թեմայի վերաբերյալ հոդվածի պատրաստում համահամալսարանական, ֆակուլտետային կամ միջամբիոնային ուսանողական գիտական կոնֆերանսի համար:

ե/ *Երկրորդ կիսամյակում* գիտահետազոտական աշխատանքի արդյունքը հանդիսանում է. ատենախոսության հաստատված թեման և աշխատանքի պլան-ժամանակացույցը՝ անհրաժեշտ հիմնական միջոցառումների և դրանց իրականացման ժամկետների նշմամբ, ատենախոսական հետազոտության նպատակների և խնդիրների առաջադրումը, հետազոտության առարկայի և օբյեկտի սահմանումը, ընտրած թեմայի արդիականության հիմնավորումը և հետազոտվող հիմնախնդրի ժամանակակից վիճակի նկարագրությունը, կիրառվելիք մեթոդաբանության բնութագրությունը, հիմնական գրականության աղբյուրների հետազոտությունը և ընտրությունը: Բացի դրանից, այս կիսամյակում իրականացվում է ատենախոսության հետազոտության համար անհրաժեշտ փաստացի նյութի հավաքումը:

զ/ *Երրորդ կիսամյակում* հետազոտական աշխատանքի արդյունքը հանդիսանում է գրականության ընտրված ցանկը ըստ հետազոտության թեմայի, հիմնված ժամանակակից գիտահետազոտական հրապարակումների վրա և ներառում է իր մեջ հիմնական արդյունքների և ենթադրությունների վերլուծություն, որոնք ստացվել են անցկացվող հետազոտության ոլորտում մասնագետների կողմից, դրանց՝ սեփական հետազոտության սահմաններում կիրառելիության գնահատականը, ինչպես նաև իր ակնկալվող ներդրումը թեմայի մշակման մեջ: Գրականության հիմքը պետք է կազմեն սկզբնաղբյուրերը, որոնք արտացոլում են հետազոտվող խնդրի տեսական ասպեկտները, առաջին հերթին գիտական մենագրություններ և գիտական պարբերականների հոդվածներ: Բացի դրանից, այս կիսամյակում իրականացվում է ատենախոսության փաստացի նյութի հավաքումը, ներառելով տվյալների հավաքման մեթոդոլոգիայի մշակումը, արդյունքների մշակման մեթոդները, կատարվում է նրանց հավաստիության և ճշտության գնահատումը ատենախոսության ակնկալվող եզրակացության համար:

է/ Հետազոտական աշխատանքի արդյունքը *չորրորդ կիսամյակում* հանդիսանում է մագիստրոսական ատենախոսության վերջնական տեքստի ձևակերպումը:

5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

Մագիստրոսների հետազոտական աշխատանքի ղեկավարում.

ա/ Հետազոտական աշխատանքի ամբողջ ծրագրի, ինչպես նաև ատենախոսության ղեկավարումը իրականացվում է մագիստրոսի գիտական ղեկավարի կողմից:

բ/ Պլանի և հետազոտական աշխատանքների ընթացիկ արդյունքների քննարկումը անցկացվում է ՀՊՄՀ-ի համապատասխան ամբիոնի կողմից, գիտահետազոտական սեմինարի սահմաններում, որը անցկացվում է ոչ պակաս քան ամիսը մեկ անգամ:

գ/ Հետազոտական աշխատանքի արդյունքները ձևակերպվում է գրավոր տեսքով և ներկայացում գիտական ղեկավարի հաստատմանը: Մագիստրոսի հետազոտական աշխատանքի մասին հաշվետվությունը գիտական ղեկավարը ներկայացնում է ամբիոնին:

դ/ Հաշվետվությանը կցվում են հոդվածների, թեզիսների, զեկույցների պատճենները, որոնք հրապարակվել և կամ հրատարակվել են ընթացիկ կիսամյակում, ինչպես նաև մագիստրոսների զեկույցները և ներկայացումները ամբիոնի գիտահետազոտական սեմինարի սահմաններում:

Սահմանված ժամկետում հետազոտական աշխատանքի հաշվետվությունը չներկայացրած կիսամյակային առարկայական ամփոփումները չանցած և համապատասխան կրեդիտները չկուտակած մագիստրոսները չեն թույլատրվում մասնակցել մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանությանը:

ե/ Մագիստրոսի հետազոտական աշխատանքի հաստատված պլանի կատարման արդյունքների համաձայն ՝ մագիստրոսին տրվում է եզրափակիչ գնահատական:

զ/ Մագիստրոսական ծրագրերը իրականացնող ամբիոնում հետազոտական աշխատանքի կազմակերպման համար, կազմվում է տեղեկությունների հավաքագրման, անհատական ու խմբային հանդիպումների ժամանակացույցը, որը հանդիսանում է հետազոտական աշխատանքի ընթացիկ և վերջնական վերահսկողության ձև և որին մասնակցությունը պարտադիր է մագիստրատուրայի բոլոր ուսանողների համար:

է/ Ֆակուլտետների դեկանները, մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարները և մագիստրոսների հետազոտական աշխատանքների ղեկավարները ուսանողների հետ համաձայնեցված կարող են նշանակել լրացուցիչ անհատական կամ խմբային խորհրդատվություններ, որոնց մասնակցությունը ուսանողների համար կամավոր է:

II. ՀՊՄՀ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ /ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ/ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ամփոփիչ ավարտական որակավորումը նախատեսված է Բարձրագույն մասնագիտական կրթության կրթական ծրագրի մասնագրով, ՀՊՄՀ-ի շրջանավարտների (մագիստրոս) մասնագիտական խնդիրներն ու առաջադրանքները կատարելու տեսական և գործնական պատրաստվածության մակարդակը որոշելու համար:

ՀՊՄՀ -ում մագիստրոսի ամփոփիչ ավարտական որակավորումը անց է կացվում Եվրոպական և ազգային որակավորումների շրջանակի պահանջների հաշվառմամբ, ՀՀ-ի ԿԳՆ-ի հրամանով հաստատված ՀՀ-ի բուհերի շրջանավարտների ամփոփիչ պետական որակավորման մասին կարգի դրույթներով, սույն չափորոշիչով:

Ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքը բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի ուսուցման կարևորագույն արդյունքն է: Այդ պատճառով ամփոփիչ աշխատանքի բովանդակությունն ու նրա պաշտպանության մակարդակը պետք է հաշվի առնվեն որպես շրջանավարտի պատրաստվածության աստիճանի գնահատման հիմնական չափանիշ և համալսարանում կրթական ծրագրերի իրականացման որակի գնահատական:

1. ԱՄՓՈՓԻՉ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ա/ Ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքը ուսանողի համալիր, ինքնուրույն աշխատանքն է, որի գլխավոր նպատակն ու բովանդակությունը մասնագիտական ուղղությանը համապատասխանող տեսական կամ գործնական բնույթի հարցերից մեկի բազմակողմանի հետազոտությունն է:

բ/ Ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքի վերաբերյալ ընդհանուր պահանջները որոշված են համալսարանում իրականացվող համապատասխան ուղղության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագրով:

գ/ Ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքի արդիականության, մասնագիտական ուղղությանը նրա թեմատիկ համապատասխանության, ղեկավարման և կատարման կազմակերպման համար պատասխանատու է թողարկող ամբիոնը և աշխատանքի անմիջական ղեկավարը, իսկ աշխատանքում շարադրված բոլոր տեսակետերի, ընդունած որոշումների և բոլոր տվյալների ճշգրտության համար պատասխանատու է ուսանողը՝ ատենախոսության հեղինակը:

դ/ Ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքի բովանդակության, կառուցվածքի, ներկայացման ձևի և ծավալի վերաբերյալ պարտադիր պահանջները սահմանվում են սույն չափորոշիչով:

ե/ Ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքը կազմված է տեքստից և հավելվածներից ու (կամ) գրաֆիկական նյութից: Տեքստային մասը պետք է նվիրված լինի բազմակողմանի վերլուծությանը կամ հետազոտմանը, աշխատանքի առաջադրանքներում ձևակերպված խնդիրների լուծմանը:

Հավելված նյութը ներկայացվում է պաստառների, նկարների, գրաֆիկների, սխեմաների, լուսանկարների, աղյուսակների և այլնի տեսքով: Հավելված նյութի կիրառման նպատակը պաշտպանության ժամանակ աշխատանքի հիմնական մասերի ցուցադրումն է, որոնք արտահայտում են կատարված տեսական հետազոտությունների և կիրառական մշակումների, եզրակացությունների և երաշխավորությունների էությունը:

Ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքի պաշտպանության ժանանակ հավելված նյութը մատուցվում է կամ A 1 ֆորմատի թղթերի վրա կամ էլ մուլտիմեդիայի տեսքով, ինչպես նաև բաշխիչ տպագիր նյութի տարբերակով: Թույլատրվում է օգտագործել կինո- և վիդեոհոլովակներ: Թույլատրվում է մատուցել հավելյալ նյութի տարբեր ձևերի համակցումը:

զ/ Ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքը պատրաստելու համար մագիստրոսին տրամադրվում է ղեկավար և խորհրդատու (ըստ նպատակահարմարության):

Է/ ՀՊՄՀ-ում ավարտական որակավորում անցկացնելու համար կազմվում են մագիստրոսական ատենախոսության պաշտպանության և որակավորման հանձնաժողովներ: Ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքի պաշտպանությունն իրականացվում է ավարտական որակավորման հանձնաժողովի նիստում:

2. ԱՄՓՈՓԻՉ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքի նպատակներն են՝

- տեսական գիտելիքների ընդլայնում, ամրապնդում և համակարգում, մասնագիտական խնդիրները լուծելիս այդ գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների ձեռքբերում,
- տեսական և փորձարարական որոշումներ ընդունելու հմտությունների զարգացում,
- փորձի ձեռքբերում տեսական, փորձարարական հետազոտությունների մշակման, վերլուծության և համակարգման, ինչպես նաև նրանց գործնական նշանակության և կիրառման հնարավոր ոլորտի գնահատման մեջ,
- փորձի ձեռքբերում սեփական գործունեության արդյունքների ներկայացման և հրապարակայնորեն պաշտպանելու ոլորտում:

3. ԱՄՓՈՓԻՉ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքի իրագործման ընթացքում, նրան առաջադրված պահանջներին համապատասխան որոշվում են հետևյալ մի քանի խնդիրները՝

- ըստ որակավորման աշխատանքի թեմայի՝ համակարգվում և վերլուծվում է տեսական նյութը,
- որոշվում են հետազոտության օբյեկտն ու մեթոդները,
- իրականացվում է ելակետային տվյալների հայթայթումը, որոնք անհրաժեշտ են տվյալ հետազոտության թեման վերլուծելու համար,
- կատարվում է հավաքված գրականության, տեղեկությունների վերլուծություն, և այդ վերլուծությունների արդյունքներից ելնելով՝ ձևավորվում են որոշումներ,
- կատարվում են տեսական և փորձարարական հետազոտություններ,
- իրականացվում տեսական նյութի մշակում,

- տեսականի և փորձարարական հետազոտություններ հիման վրա մշակվում և շարադրվում է գործնական մոտեցումները ,

Ատենախոսության պատրաստման և պաշտպանության գործընթացում մագիստրոսը պետք է ցուցաբերի՝

- ինքնուրույն ստեղծագործական մտածելակերպ,
- աշխատանքի ընթացքում կատարվող հետազոտությունների մեթոդների և մեթոդիկաների տիրապետում,
- ձեռքբերված արդյունքների գիտական վերլուծության, աշխատանքի ընթացքում ստացված (պաշտպանվող) եզրակացությունների և դրույթների մշակման ընդունակություն,
- գործնական և գիտական գործունեության մեջ ստացված արդյունքների օգտագործման հնարավորությունները գնահատելու կարողություն:

4. ԱՄՓՈՓԻՉ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՄԱՆԵՐԸ

ա/ Ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքի թեմաները որոշում են այն ամբիոնները, որոնք իրականացնում են համապատասխան մասնգիտությունների և ուղղությունների մագիստրոսական կրթական ծրագրերը:

բ/ Ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքի թեման մեկ կամ մի քանի խնդիրների մշակումն է, որոնք Բարձրագույն մասնագիտական կրթության մասնագրի համապատասխան կապված են ուսանողի մասնագիտության հետ:

գ/ Մագիստրոսին իրավունք է տրվում ՀՊՄՀ-ում սահմանված կարգով ընտրել ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքի թեման:

դ/Ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքի թեման հաստատելու համար մագիստրոսը դիմում է գրում ամբիոնի վարիչի անունով:

ե/ Այն դեպքում, եթե ամփոփիչ որակավորման ավարտական աշխատանքը կատարվում է ըստ գործատու կազմակերպության նյութերի, ապա թեման պետք է մոտ լինի այդ կազմակերպության կողմից առաջադրվող խնդիրներին:

զ/ Ամփոփիչ աշխատանքի թեմաներն ընտրելիս հարկավոր է առաջնորդվել հետևյալ դրույթներով՝

- թեմայի արդիականությունը,

- արդյունքների գործնական կարևորությունն մասնագիտական տեսանկյունից և կամ այն կազմակերպության համար, որի թեմայով կատարվում է աշխատանքը,
- աշխատանքի մեջ նոր մշակումների, մեթոդիկաների, հետազոտման և արտահայտման անհրաժեշտությունը:

5. ԱՄՓՈՓԻՉ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա/ Մագիստրոսական ատենախոսությունը պետք է ապահովի մասնագիտական գործունեության նախընտրած ոլորտում ակադեմիական մշակույթի ամրապնդում և մեթոդաբանական պատկերացումների ու մեթոդական հմտությունների ամբողջություն:

բ/ Մագիստրոսական ատենախոսությունը իրականացվում է համալսարանում սովորելու ժամանակահատվածում (4 տարի բակալավր, 2 տարի մագիստրոս) ստացված գիտելիքների և մագիստրատուրայում անցած մանկավարժական/հետազոտական պրակտիկայի արդյունքում ստացված հետազոտական աշխատանքի և գործնական հմտությունների հիման վրա:

գ/ Մագիստրոսական ատենախոսության աշխատանքը ավարտվում է վերջին՝ 12-րդ կիսամյակի ընթացքում: Մագիստրոսական ատենախոսության պատրաստման համար հատկացված ժամանակը որոշվում է ըստ ուսումնական պլանի՝ ոչ պակաս, քան 20 շաբաթյա ծավալով:

դ/ Մագիստրոսական ատենախոսության թեմաները թեմաները հաստատվում են ամբիոններում և ֆակուլտետի խորհրդում, ներկայացվում համալսարանի ռեկտորի հրամանագրմանը: Մագիստրոսը ինքնուրույն կարող է առաջարկել իր թեման՝ բերելով դրա մշակման անհրաժեշտության հիմնավորումները:

ե/ Ատենախոսության գիտական ղեկավար կարող են նշանակվել մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարները, մասնագիտական ամբիոնի, այլ համալսարանի ամբիոնների պրոֆեսորները կամ դոցենտները, կամ էլ գիտական և գիտահետազոտական հաստատությունների գիտաշխատակիցները: Մագիստրոսական ատենախոսության ղեկավարը պետք է ունենա գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, իսկ վերջիններիս բացակայության պարագայում արվեստի կամ մշակույթի ուղղվածության մասնագիտությունների

(կամ՝ սոցիալ-մշակութային բնագավառի) համար՝ ՀՀ արվեստի կամ մշակույթի վաստակավոր գործիչ, ՀՀ վաստակավոր կամ ժողովրդական արտիստ:

զ/Այն դեպքում, եթե մագիստրոսական ատենախոսությունը կրում է զուգադրական, միջառարկայական բնույթ կամ կապված է որևէ կազմակերպության թեմատիկայի հետ, որտեղ անց է կացվել մագիստրոսի հետազոտական աշխատանքը, ապա ամբիոնին իրավունք է տրվում հրավիրել գիտական խորհրդատուներ՝ ըստ աշխատանքի առանձին բաժինների:

է/ Մագիստրոսական ատենախոսության բովանդակությունը պետք է բավարարի շրջանավարտի մասնագիտական պատրաստվածության պահանջները և ըստ թեմայի իր մեջ ներառի՝

- առաջ քաշված խնդրի վերլուծություն, որը կատարվել է գիտական և արտոնագրված աղբյուրների ուսումնասիրման հիման վրա,
- հետազոտական կամ մեթոդական ուղղության խնդրի ձևակերպում,
- խնդրի լուծման մեթոդի կամ միջոցի առաջարկ կամ հիմնավորում,
-մագիստրոսի կողմից կատարված տեսական, փորձարարական հետազոտությունների նկարագրում,
- ստացված արդյունքներն ու նրանց քննադատական վերլուծությունը,
- ստացված արդյունքները գործնական և մանկավարժական գործունեության մեջ օգտագործելու եզրահանգումներ,
- օգտագործված աղբյուրների ցանկը:

ը/ Հավելվածների հետ մագիստրոսական ատենախոսության ծավալը պետք է լինի 50-60 տպագրական էջ[1]: Մագիստրոսական ատենախոսության պաշտպանությանը դրվող հավելված (գրաֆիկական) նյութի ծավալը պետք է կազմի՝

- A 1 ֆորմատի թերթերի վրա ներկայացվելու դեպքում ոչ պակաս, քան 6 թերթ,
- նոր տեխնոլոգիաների կիրառմամբ ներկայացնելու դեպքում 6-12 սլայդ՝ պաշտպանության համար բաշխիչ նյութի առկայությամբ:

---

[1]«Լրագրության» բաժին – թեզ՝ 50-70 էջ (կարող է հավելվել նաև տեսանյութ՝ մինչև 5 րոպե):
«Օպերատորության» բաժին – տեսաֆիլմ՝ մինչև 15 րոպե + էքսպլիկացիա՝ մինչև 20 էջ:
«Գեղարվեստական լուսանկարչության» բաժին – սլայդ-ֆիլմ՝ 80-100 լուսանկար + էքսպլիկացիա՝ մինչև 20 էջ: «Ռեժիսուրայի» բաժին՝ «Հեռուստաֆիլմերի և հեռուստածրագրերի ռեժիսուրա» –էքսպլիկացիա (հեռուստաֆիլմի կամ հեռուստահաղորդման)՝ 30-50 էջ: «Ռեժիսուրայի» բաժին՝ «Մասսայական հանդիսությունների ռեժիսուրա» - էքսպլիկացիա (պիեսի կամ գրական ստեղծագործության)՝ 30-50 էջ:
«Պարարվեստի մանկավարժության» բաժին – թեզ՝ 35-45 էջ:

թ/Մագիստրոսական ատենախոսությունը ենթարկվում է գրախոսության համալսարանի այլ ամբիոնների կամ գործատուների կողմից:

6. Ամփոփիչ որակավորման աշխատանքների կառուցվածքային տարրերը և բովանդակության վերաբերյալ հիմնական պահանջները

Ամփոփիչ որակավորման աշխատանքների կառուցվածքային տարրերը ձևակերպվում են համաձայն ստորև բերված աղյուսակի հաջորդականության:

Որակավորման աշխատանքի կառուցվածքա յին տարրերի անվանումը	Մագիստրոսական ատենախոսություն
Տիտղոսաթերթ	+
Բովանդակություն	+
Ներածություն	+
Հիմնական մաս/տեքստ/	+
Եզրակացություն/Հետևություններ	+
Օգտագործված գրականության ցանկ	+
Հավելված	+
	Անհրաժեշտության դեպքում

Կառուցվածքային տարրերի բոլոր վերնագրերը, բացի հիմնական մասից, պետք է տեղադրել տողի մեջտեղում, տպագրել գլխատառերով՝ առանց վերջակետի, չընդգծել, չտողադարձել: Յուրաքանչյուր կառուցվածքային տարրի տպագրումը սկսվում է նոր թերթից: Բացի հիմնական մասից, կառուցվածքային տարրերը չեն համարակալվում: Կառուցվածքային տարրի տեքստը գրվում է վերնագրից մեկ տող ներքև՝ մի մատ խորքից:

Հիմնական մասը բաղկացած է բաժիններից, ենթաբաժիններից, կետերից, ենթակետերից, թվարկումներից, աղյուսակներից, նկարներից (պատկերներից):

7. ԱՄՓՈՓԻՉ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ

Ամփոփիչ որակավորման աշխատանքների առաջադրանքները սահմանված կարգով ձևակերպվում են մագիստրոսի և ղեկավարի միացյալ ուժերով:

Ամփոփիչ որակավորման աշխատանքներին վերաբերող առաջադրանքները ձևակերպելիս անհրաժեշտ է ճշգրիտ որոշել հետազոտման, մշակման ուղղությունները, ինչպես նաև մասնագիտական այլ պահանջները: Կատարման գրաֆիկում պետք է նշել ամփոփիչ որակավորման աշխատանքի բաժինների անվանումները և փուլային իրագործման ստույգ ժամկետները:

Ղեկավարի առաջին ստուգումը խորհուրդ է տրվում անցկացնել ԱՈԱ-ին հատկացված ժամանակացույցի ժամանակի 1/3-ից հետո: Երկրորդ ստուգումը պետք է անցկացնել հատկացված ժամանակի 2/3-ից հետո: Ղեկավարի 3-րդ ստուգումն անց է կացվում ամբիոնի որոշմամբ և կարող է համատեղվել ԱՈԱ-ի նախնական պաշտպանության հետ: Համապատասխան հատվածներում նշվում են ստուգումների ստույգ ամսաթվերը:

Ղեկավարի, ուսանողի, խորհրդատուների ստորագրություններից հետո առաջադրանքները հաստատվում է թողարկող ամբիոնի վարիչի կողմից:

1. Տիտղոսաթերթ

ԱՈԱ- ի տիտղոսաթերթն առաջին էջն է, որը չի համարակալվում, լրացվում է ըստ ԱՈԱ-ի ձևի՝ համաձայն հավելվածի: ԱՈԱ-ի բոլոր ձևերի տիտղոսաթերթի վերին հատվածում գրվում է համալսարրանի ամբողջական անվանումը և բաժանվում է հորիզոնական գծով:

Այնուհետ թերթի աջ անկյունում կից գրվում է թողարկող ամբիոնի անվանումը, պաշտպանությանը թույլատրելը, և դրվում է ամբիոնի վարիչի ստորագրությունը:

Մագիստրոսական ատենախոսության տիտղոսաթերթի միջին մասում գրվում է մագիստրոսական ատենախոսության անվանումը:

Հաջորդ տողում նշվում է մագիստրոսական կրթական ծրագրի դասիչն ու անվանումը: Այնուհետև գրվում է ՝_____մագիստրոսի աստիճան հայցելու ատենախոսություն՝ (առանց չակերտների, տառատեսակը 16, ՝ատենախոսություն՝ բառը գրել միջին չափով):

Տիտղոսաթերթի ստորին մասի ձախ անկյունում նշվում է մագիստրոսի անունը, հայրանունը ու ազգանունը, և դրվում է նրա ստորագրությունը: Աջ անկյունում նշվում է գիտական ղեկավարի գիտական աստիճանը, գիտական կոչումը, և տվյալների առջև դրվում է նրա ստորագրությունը:

Այնուհետև նշվում է ԱՈԱ-ի կատարման տարին և քաղաքը (առանց նշելու ՝տարի՝ և ՝քաղաք՝ բառերը):

ԱՈԱ-ի թեմաների անվանումները գրվում են ուղիղ գլխատառերով (մեծատառերով)՝ 5 մմ բարձրությամբ (տառաչափը՝ 20): Թեմայի անվանումը պետք է համապատասխանի ԱՈԱ-ի թեմաների հաստատմամբ ձևակերպված ռեկտորի հրամանին:

2. *Բովանդակություն*

Բովանդակությունը պետք է համապատասխանի ԱՈԱ-ի տեքստին: Բովանդակությունը սկսվում է ներածությունից և ընդգրկում է բոլոր բաժինների, ենթաբաժինների, ինչպես նաև կետերի, ենթակետերի (եթե նրանք անվանում ունեն) անվանումները, եզրակացությունը, օգտագործված աղբյուրների ցանկը, հավելվածների անվանումն ու նշանակությունը՝ նշելով այն էջերը, որտեղից սկսվում են ԱՈԱ-ի տվյալ հատվածը:

Բովանդակությունը չի ներառում տիտղոսաթերթը:

՝Բովանդակություն՝ բառը գրվում է տողի կենտրոնում՝ գլխատառերով, առանց վերջակետի, չի ընդգծվում:

գ/ Ներածություն

Մագիստրոսական ատենախոսության ներածությունը պետք է արտահայտի՝

- մագիստրոսական ատենախոսության թեմայի արդիական լինելը,
- աշխատանքի նպատակներն ու խնդիրները,վարկածը
- պաշտպանության դրույթները

-- աշխատանքում օգտագործվող հետազոտության մեթոդները

-հետազոտության գործնական նշանակությունը կամ կիրառելիությունը

-աշխատանքի ծավալը և կառուցվածքը

Հետազոտության արդիականությունը բնութագրվում է խնդրի վիճակով, որը ԱՈԱ-ի շրջանակներում հետազոտվում է որակավորվողի կողմից: Հետազոտության նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև հետազոտման մեթոդները, ձևակերպվում և ընտրվում են ղեկավարի հետ՝ ԱՈԱ-ին վերաբերող առաջադրանքները կազմելու փուլում: Օբյեկտը գործընթաց կամ երևույթ է, որը ստեղծում է վիճահարույց իրավիճակ և հետազոտում է այն: Առարկան այն է, ինչ գտնվում է օբյեկտի սահմաններում:

'Ներածություն' բառը գրվում է տողի կենտրոնում՝ գլխատառերով, առանց վերջակետի, չի ընդգծվում:

3.Հիմնական մաս

ԱՈԱ-ի հիմնական մասը պետք է պարունակի բաժիններ, որոնք արտահայտում են առաջադրանքին համապատասխանող հիմնական խնդիրների էությունը, մեթոդիկան, լուծումը և աշխատանքի հիմնական արդյունքները: ԱՈԱ-ին վերաբերող առաջադրանքին համապատասխան՝ հիմնական մասը կարող է պարունակել՝

ա) հետազոտության ուղղության ընտրություն, որը ներառում է հետազոտության ուղղության հիմնավորումը, խնդիրների լուծման մեթոդները և նրանց համեմատական գնահատականը: Այս բաժնում տրվում է ընտրված հետազոտման խնդրի տեսական հիմնավորումը: Այն կատարվում է աղբյուրների վերլուծության հիման վրա, որտեղ առաջարկվում է հետազոտման խնդրի վերաբերյալ սեփական տեսակետը, արվում են թեմայի արդիականույթյանը վերաբերող դատողություններ,

բ) տեսական և (կամ) փորձարարական հետազոտությունների նկարագրումը, ինչպես նաև տեսական հետազոտությունների բնույթի և բովանդակության որոշումը, հետազոտությունների մեթոդները ու արդյունքները, փորձարարական աշխատանքների անցկացման անհրաժեշտության հիմնավորումը, մշակված օբյեկտների գործունեության սկզբունքները, նրանց բնութագրումը և փորձարարական մասը նկարագրելիս շարադրվում է հետազոտության ընդհանուր ամբողջականությունը և հիմնական մեթոդները, խնդիրների լուծման 'ալգորիթմերը'

գ) հետազոտությունների արդյունքների ընդհանրացումն ու գնահատականը, առաջադրված խնդրի լուծման գնահատականը, ստացված արդյունքների արժանահավատության գնահատականը, հիմնավորումը և աշխատանքի արդյունքները օգտագործելու վերաբերյալ առաջարկները:

Հիմնական մասի բաժինների քանակը համաձայնեցվում է ղեկավարի հետ: ԱՈԱ-ի հիմնական նյութի բաշխումն ըստ հիմնական մասի բաժինների, ենթաբաժինների և այլն, որոշվում է ԱՈԱ-ի հեղինակի կողմից:

ԱՈԱ-ի տեքստը պետք է բավարարի ավարտված աշխատանքներին առաջադրվող հիմնական պահանջներին, այն է կառուցվածքի հստակություն, տրամաբանություն և հաջորդականություն, բերված տեղեկությունների ճշգրտություն, նյութի պարզ և հակիրճ շարադրում, շարադրման համապատասխանությունը գրական լեզվի չափանիշներին:

4. Եզրակացություն

Եզրակացությունը պետք է պարունակի ԱՈԱ-ի արդյունքներին վերաբերող հակիրճ դատողություններ (մեկնաբանություններ)՝ առաջադրանքի կատարման ամբողջականության և գնահատման, խորհրդատվություն աշխատանքի արդյունքները տեսականորեն և գործնականորեն կիրառելու վերաբերյալ և բովանդակային առումով համապատասխանի ներածության մեջ առաջադրված խնդիրներին:

՝ Եզրակացություն՝ բառը գրվում է տողի մեջտեղում՝ գլխատառերով, առանց վերջակետի, չի ընդգծվում:

5. Օգտագործված աղբյուրների ցանկից մեջբերումներ անել

ԱՈԱ գրելիս հաճախ հարկավոր է օգտվել տարբեր հեղինակների աշխատություններից: Այս դեպքում անհրաժեշտ է վկայակոչել այս կամ այն աղբյուրը: . Պետք է նաև ուշադրություն դարձնել օգտագործված աղբյուրների հստակ մատնանշմանը:

- Հարկավոր է վկայակոչել կամ աղբյուրը, կամ նրա բաժիններն ու հավելվածները: Ենթաբաժինների, կետերի, աղյուսակների և պատկերների վկայակոչումը չի թույլատրվում՝ բացառությամբ տվյալ ԱՈԱ-ի ենթաբաժինների, աղյուսակների ու պատկերների:
- Օգտագործված աղբյուրների ցանկը համարակալվում է արաբական թվերով՝ առանց համարից հետո դրվող կետի: Օգտագործված աղբյուրների ցանկը պետք է տեղեկություններ պարունակի ԱՈԱ-ի կատարման ժամանակ օգտագործված գրական աղբյուրների և ինտերնետի տեղեկատվական ռեսուրսների մասին, որոնց վերաբերյալ տեքստում անպայման պետք է վկայակոչումներ անել:

- Օգտագործված աղբյուրների վկայակոչման ժամանակ նշում են աղբյուրի գրական նկարագրության կարգային թիվը՝ գտագործված աղբյուրների ցանկից: Վկայակոչման կարգային համարը գրվում է քառակուսի փակագծերի մեջ, օրինակ՝ [1]: Վկայակոչումների համարակալումը կատարվում է արաբական թվերով՝ ըստ տեքստում բերված վկայակոչումների կարգի:
- ՝Օգտագործված աղբյուրների ցանկը՝-ը գրվում է տողի մեջտեղում՝ գլխատառերով, առանց վերջակետի, չի ընդգծվում:

6. Հավելվածներ

ԱՈԱ-ի հիմնական մասը լրացնող նյութը ձևակերպվում է հավելվածների տեսքով: Խորհուրդ է տրվում հավելվածների մեջ ներառել կատարված աշխատանքներին վերաբերող նյութեր, որոնք որոշ պատճառներով չեն ընդգրկվել հիմնական մասում: Նպատակահարմար է հավելվածներում կիրառել գրաֆիկական նյութեր, աղյուսակներ:

- Հավելվածները ձևակերպվում են որպես ԱՈԱ-ի շարունակություն կամ բացատրական գրվածք: Տեքստում բոլոր հավելվածների վերաբերյալ պետք է վկայակոչումներ արվեն: Պարտադիր հավելվածները վկայակոչելիս օգտագործվում է ՝համաձայն 1 հավելվածի՝ արտահայտությունը, իսկ խորհրդատվությունը և տեղեկատվությունը վկայակոչելիս՝ ՝բերված է 2 հավելվածում՝ արտահայտությունը:
- Հավելվածները կարող են լինել պարտադիր, խորհրդատվական և տեղեկատվական: Յուրաքանչյուր հավելված սկսվում է նոր էջից, որի վերին հատվածի կենտրոնում գրվում է ՝Հավելված՝ բառը գլխատառերով, և դրա նշանակությունը (ուղղությունը), իսկ դրա տակ կլոր փակագծերում փոքրատառերով նշվում է հավելվածի աստիճանը՝ օգտագործելով ՝պարտադիր՝, ՝խորհրդատվական՝ կամ ՝տեղեկատվական՝ բառերը:

  Հավելվածը գրվում է գլխատառերով՝ տեքստի տառերին համաչափ:
- Հավելվածները գրվում են թվանիշերով /1;2;3/: ՝Հավելված՝ բառին հաջորդում է նրա հաջորդականությունն արտահայտող թիվը, օրինակ՝ Հավելված 1:
- Հավելվածները գրվում են A4 ֆորմատի թղթերի վրա, թույլատրվում են նաև A3 ֆորմատի թղթերը:

- Հավելվածները պետք է ԱՈԱ-ի մնացած մասի հետ ունենան էջերի ընդհանուր միջանցիկ համարակալում:

7. ԱՈԱ-ի ձևակերպման կանոնները

ԱՈԱ-ն պետք է հավաքվի համակարգչի ու տպիչի օգնությամբ՝ A4 ֆորմատի սպիտակ թղթի մի էջի վրա (210 X 297) 1.5 միջակայքով, սև գույնով, 12-13 տառաչափով, Sylfaen /հայերենի դեպքում/ Times New Roman տառատեսակով, տողերի հեռավորությունը՝ 10 մմ: Էջերը պետք է ունենան լուսանցքներ. ձախից- 20մմ, վերևից- 20մմ, աջից- 10մմ, ներքևից- 20մմ:

Նկարների, գծագրերի անվանումների, նշանակումների բացատրությունները տրվում են նույն էջում: Լուսանկարները կարելի է սոսնձել թղթի վրա:

8. ԱՎԱՐՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՔՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. *Ավարտական որակավորման աշխատանքի կատարման փուլերը*

- ԱՈԱ-ի կատարումը բաժանվում է մի քանի փուլերի՝

- նախապատրաստական
- կատարողական
- ձևակերպման
- գրախոսություն և աշխատանքի նախնական պաշտպանություն
- ԱՈԱ/Պ/Հ-ում աշխատանքի պաշտպանություն

- Ընտրելով հետազոտության օբյեկտը՝ որակավորվողը հավաքում է անհրաժեշտ տվյալներ, ուսումնասիրում է հետազոտությանը կամ մշակմանը վերաբերող գրականություն, անց է կացնում համանման խնդիրների շրջանակներում գոյություն ունեցող գրականության վերլուծություն:
- Կատարողական փուլը աշխատանքի կատարման բուն ժամանակահատվածն է, տեսական և գործնական, հետազոտական աշխատանքների նկարագրումը և կազմում է ԱՈԱ-ի կատարման համար հատկացված ժամանակի հիմնական մասը:

- Ձևակերպման փուլը ներառում է ԱՈԱ-ի տեքստի պատրաստումը և պաշտպանության համար անհրաժեշտ այլ նյութի ձևավորումը սույն չափորոշիչի պահանջներին համապատասխան:

2. *ԱՈԱ-ի կատարման գործընթացում ուսանողի (որակավորվողի) պարտականությունները* ՝

- ինքնուրույն գնահատել ԱՈԱ-ի թեմայի խնդրի հետ կապված արդիականությունը և նշանակությունը,

- ղեկավարի հետ համատեղ կազմել ԱՈԱ-ի խնդրի հետ կապված հանձնարարությունը,

- հավաքել և մշակել ԱՈԱ-ի թեմայի շրջանակներում տեղեկատվությունը, ուսումնասիրել և գործնականորեն վերլուծել ստացված նյութերը,

- ինքնուրույն ձևակերպել ԱՈԱ-ի նպատակն ու խնդիրները,

- անցկացնել հետազոտություններ, մշակումներ, ԱՈԱ-ի խնդրին համապատասխան հաշվարկներ, տալ խնդրի լուծման մասնագիտական փաստարկման տարբերակը,

- հաշվի առնելով ղեկավարի և խորհրդատուների կարծիքը՝ ընդունել ինքնուրույն որոշումներ,

- ձևակերպել ԱՈԱ-ի տեքտում խնդիրների լուծումը, գրաֆիկական մասը և այլ փաստաթղթերը: ԱՈԱ-ի արդյունքները ներկայացնելու համար պատրաստել նմուշներ (սլայդներ, տեսահոլովակներ, համակարգչային ներկայացման ծրագրեր և այլն):

- ձևակերպել տրամաբանորեն հիմնավորված եզրակացություններ, առաջարկություններ ստացված արդյունքները գործնականում կիրառելու համար,

- պատրաստել զեկուցում ԱՈԱ-ի պաշտպանության համար:

Որակավորվողը կրում է լրիվ պատասխանատվություն ԱՈԱ-ի բովանդակության համար, որն հաստատվում է ԱՈԱ-ի տիտղոսաթերթի և այլ մասերի վրա նրա ստորագրությամբ:

3. ԱՈԱ-ի առանձին բաժնի համար ղեկավարի խորհրդատվական պարտականությունները ՝

- ԱՈԱ-ի ղեկավարի համաձայնությամբ ձևակերպում է հանձնարարությունը համապատասխան բաժնի կատարման համար,

- որոշում է ԱՈԱ-ի համապատասխան բաժնի կառուցվածքը,

- ուսանողին ցուցաբերում է մեթոդական օգնություն խորհրդատվությունների միջոցով, գնահատում է ընդունված որոշումների թույլատրելիությունը,

- ստուգում է բաժնի ծավալի և բովանդակության համապատասխանությունը հանձնարարությանը,

- եզրակացություն է անում ԱՈԱ-ի համապատասխան բաժնի՝ պաշտպանությանը պատրաստ լինելու մասին, որը հաստատվում է տիտղոսաթերթի վրա ստորագրությամբ:

- ԱՈԱ-ն հաստատելուց հետո ղեկավարը տալիս է գրավոր կարծիք:

4. Ղեկավարի պարտականությունները և ԱՈԱ-ի մակարդակի գնահատման չափանիշները

ԱՈԱ-ի ղեկավարը ԱՈԱ-ի ղեկավարման համար հատկացված ժամերի ծավալով՝

- ձևակերպում է ԱՈԱ-ի հանձնարարությունը,
- ուսանողին օգնություն է ցուցաբերում աշխատանքի կազմակերպման և կատարման, ԱՈԱ-ի կատարման ամբողջ փուլում օրացուցային պլան-գրաֆիկի մշակման համար, ղեկավարում է ԱՈԱ-ի կատարման ընթացքը,
- խորհուրդ է տալիս ուսանողին անհրաժեշտ հիմնական գրականությունը, տեղեկատուները և արխիվային նյութերը, տիպային ծրագրերը և ԱՈԱ-ի թեմայով այլ աղբյուրները,
- ուսանողի հետ իրականացնում է պարբերական հանդիպումներ, իրականացնում է խորհրդատվություն, ստուգում է աշխատանքի կատարումը աշխատանքի բովանդակային ևս սույն չափորոշիչի հետ համապատասխանության տեսանկյունից: ԱՈԱ-ի կատարման ժամանակացույցի համաձայն ամբիոնի վարիչին՝
- տալիս է աշխատանքի վերաբերյալ գրավոր կարծիք,
- մասնակցում է ԱՈԱ-ի նախապաշտպանությանը,
- ներկա է գտնվում ԱՈԱ-ի պաշտպանությանը :

ԱՈԱ-ի գնահատման օբյեկտիվության մակարդակի ապահովման նպատակով ղեկավարը գնահատում է ԱՈԱ-ը ՀՊՄՀ-ի կողմից հաստատված չափանիշների համաձայն:

Ղեկավարը պետք է **բնութագրի հետազոտողի աշխատանի ընթացքը,** աշխատանքի ընթացքում որակավորվողի կողմից ցուցաբերված ինքնուրույնության և **ստեղծագործական մոտեցման** աստիճանը, որակավորվողի հետազոտական,գործնական գործունեության բնութագիրը, **նյութերի հավաքագրման, դասակարգման, դրանց կիրառման ուղղությամբ աշխատանքները** կազմակերպելու ունակությունը, հրատարակված հոդվածների քանակը, կոնֆերանսներին ելույթների քանակը, դրանց թվարկումը, տվյալ թեմայի շրջանակներում որակավորվողի աշխատանքի ժամկետը:

5. *ԱՈԱ-ի նախապաշտպանության անցկացումը*

- Ավատված մագիստրոսական ատենախոսությունը ուսանողի կողմից ներկայացվում է ամբիոն նախապաշտպանության համար: Նախապաշտպանության նպատակն է օգնել որակավորվողին պատրաստվել պաշտպանությանը՝ ճիշտ կազմակերպել զեկույցը, ընդգծել կարևոր պահերը, օգտագործել պատկերազարդ (գրաֆիկական) նյութը, ստանալ հանրային ելույթի հմտություններ, հարցերի պատասխաններ և քննարկման անցկացում:
- Նախապաշտպանության անցկացման ժամկետները և ձևերը որոշվում են ամբիոնի կողմից:
- Եթե ամբիոնը նիստի ժամանակ ընդունում է որոշում ուսանողին չթույլատրել պաշտպանության, ապա ամբիոնի նիստի քաղվածքը հիմնավորված որոշման հետ ներկայացվում է ռեկտորին:
- Նախապաշտպանությունը դրական եզրակացությամբ անցնելու դեպքում,աշխատանքին նշանակվում է գրախոս, ում և ներկայացվում է ԱՈԱ-ը:

6. ԱՈԱ-ի գրախոսումը և գրախոսի գործառույթները

- Մագիստրոսական ատենախոսության գրախոսության համար աշխատանքը տրվում է ոչ ուշ, քան ատենախոսության պաշտպանությունից 10 օր առաջ: Մագիստրոսական ատենախոսության գրախոսը պարտավոր է գրախոսական կարծիքը ներկայացնել ատենախոսությունը ստանալուց հետո 7 օրվա ընթացքում:

- Գրախոս կարող են լինել ՀՊՄՀ-ի համապատասխան ամբիոնների դասախոսներ կամ այլ բուհերից, գիտական կազմակերպություններից և այլն: Եթե ԱՈԱ-ն կատարվել է այլ կազմակերպությունում, ապա գրախոս կարող է լինել այդ հաստատության աշխատակիցներից, համալսարանի ամբիոնի դասախոսներից կամ աշխատակիցներից մեկը կամ այլ բուհերից, գիտական կազմակերպություններից և այլն:
- Մագիստրոսական ատենախոսության գրախոսը,որպես կանոն, պետք է ունենա գիտական աստիճան:
- Գրախոսների կազմը հաստատվում է ամբիոնի վարիչի կողմից:
- Գրախոսը հանդես է գալիս փորձագետի դերում: Սրան համապատասխան նրա գրախոսությունը պետք է բովանդակի աշխատանքի ավելի բազմակողմանի բնութագիր: Նա որոշում է աշխատանքի թեմայի արդիականության աստիճանը, ներկայացված նյութի համապատասխանելիությունը ԱՈԱ-ի խնդրին, ԱՈԱ-ի կատարման մակարդակը:
- Բոլոր անհրաժեշտ ստորագրությունների, դրական կարծիքների և գրախոսության առկայության դեպքում ԱՈԱ-ի պաշտպանության համար թույլատվությունը ձևակերպվում է ամբիոնի վարիչի ստորագրությամբ ԱՈԱ-ի տիտղոսաթերթի վրա:
- Բացասական գրախոսության դեպքում ամբիոնի վարիչը պարզաբանում է խնդիրը գրախոսի,որակավորվողի և նրա ղեկավարի հետ, հաշվի է առնում նրանց կարծիքը, ընդունում որոշում պաշտպանությանը թույլատրելու մասին:
- Մագիստրոսական ատենախոսությունների համար ղեկավարի կարծիքը կամ բացասական գրախոսությունը, եթե ատենախոսը համաձայն չի դրա հետ, չեն խոչընդոտում պաշտպանությանը:

7. ԱՈԱ-ի պաշտպանության կազմակերպումը և ՊՈՀ-ի գործառույթները

- ԱՈԱ-ի պաշտպանության նպատակը մասնագիտական խնդիրներ լուծելու գործում շրջանավարտի պատրաստվածության մակարդակի որոշումն է համաձայն մասնագիտության կրթական մասնագրի վերջնարդյուքների պահանջների:

- ԱՈԱ-ի պաշտպանությանը թույլտրվում է այն անձը, որը հաջողությամբ ավարտել է հիմնական կրթական ծրագիրն ըստ բարձրագույն մասնագիտական կրթության նախապատրաստման (մասնագիտության) ուղղությունների, մշակված բարձրագույն կրթական համակարգի կողմից համաձայն ԱՈԱ-ի ՊՈՀ-ի և որը հաջողությամբ ավարտել է ավարտական ատեստավորման փարձությունների այլ տեսակները:
- Իր աշխատանքում ՊՈՀ-ն առաջնորդվում է ՀՀ-ի բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական ավարտական որակավորման կարգ-ով և սույն չափորոշիչով:
- ՊՈՀ-ը շնորհում է որակավորում և, հաշվի առնելով ուսանողի ելույթը, տալիս է ԱՈԱ-ի ավարտական գնահատականը: ՊՈՀ-ը գնահատում է ելույթի գրագիտությունը, մասնագիտական բառապաշարի իմացության մակարդակը, հարցերին մասնագիտորեն պատասխանելու ունակությունը, պատկերազարդ նյութերի ներկայացման ամբողջականությունը և տեքստի և ԱՈԱ-ի գրաֆիկական մասի մեջ նյութերի ներկայացման մակարդակը համաձայն խնդրին, գնահատում է ուսանողի գիտելիքների մակարդակը:
- Ներկայացված աշխատանքի և մասնագետի պատրաստվածության մակարդակի մասին եզրակացություն ներկայացնելիս ՊՈՀ-ը կողմնորոշվում է ՊՈՀ-ի անդամների կարծիքով՝ հաշվի առնելով ղեկավարի և գրախոսի կարծիքները:
- ՊՈՀ-ի պարտականությունների մեջ է մտնում մագիստրոսների պատրաստման կատարելագործմանն ուղղված հանձնարարականների պատրաստումը ՊՈՀ-ի աշխատանքների արդյունքների հիման վրա:
- ԱՈԱ-ի պաշտպանությունն անց է կացվում ՊՈՀ-ի բաց նիստի ժամանակ կազմի ոչ պակաս, քան 2/3-ի մասնակցությամբ, ՊՈՀ-ի աշխատանքների ցուցակին համապատասխան:
- ՊՈՀ-ի աշխատանքները սկսելու համար դեկանատը յուրաքանչյուր որակավորվողի համար պատրաստում է քաղվածք ուսումնական պլանից նշումներով և ուսումնառության ողջ ընթացքում ստացած գնահատականներով, իրականացնում է համեմատություն ուսումնական քարտի և ստուգարքային գքույկի միջև:

- Պաշտպանությունից 10 օր առաջ ամբիոնի վարիչը ՊՈՀ-ի քարտուղարին ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

- ավարտական որակավորման աշխատանքը,
- ղեկավարի կարծիքը,
- գրախոսություն,
- ԱՈԱ-ի բնութագիրը (համաձայն ամբիոնի որոշման),

- ՊՈՀ-ի տեխնիկական քարտուղարի պարտականությունները՝

- կազմել ՊՈՀ-ի նիստերի պլանը (ԱՈԱ-ի պաշտպանությունների գրաֆիկը),
- տեղեկացնել ՊՈՀ-ի անդամներին գալիք նիստերի մասին, ապահովել քվորումը,
- տեղադրել տեղեկատվություն ԱՈԱ-ի գալիք պաշտպանությունների մասին /թեմա, որակավորվողի և ղեկավարի ազգանուններ/ հատուկ ցուցափեղկի վրա,
- պատրաստել փաստաթղթեր և նյութեր ՊՈՀ-ի նիստի համար,
- կազմել ՊՈՀ-ի նիստերի քաղվածքները,
- պատրաստել տեղեկատվություն ՊՈՀ-ի ղեկավարի համար նիստերի քաղվածքների հիման վրա,
- ԱՈԱ-ն պաշտպանությունից հետո հանձնել արխիվ:

8. ԱՈԱ-ի պաշտպանության ընթացակարգը.

- ՊՈՀ-ի նիստից առաջ բոլոր անդամներին բաժանվում է մագիստրանտների մասին տեղեկությունը, որոնց պաշտպանությունը պլանավորված է տվյալ նիստի համար, ինչպես նաև ՊՈՀ-ի անդամների բլանկերը,

- ՊՈՀ-ի քարտուղարը ՊՈՀ-ի ներկայացուցիչին է փոխանցում մագիստրոսական ատենախոսությունը ղեկավարի կարծիքի և գրախոսության հետ միասին, որը ՊՈՀ-ի ներկայացուցիչներին և ներկաներին տեղեկացնում է մագիստրոսական աշխատանքի թեման, մագիստրանտի ազգանուն, անուն, հայրանունը և ղեկավարի ազգանուն, անուն, հայրանունը, գիտական ղեկավարի կարծիքը,
  - մագիստրոսը ներկայացնում է իր ատենաճառը,
  - ընթերցվում է գրախոսությունը (գրախոսի բացակայության դեպքում այն ընթերցում է նախագահը),
  - մագիստրոսին տրվում է հնարավորություն արձագանքելու գրախոսի դիտողություններին և առաջարկություններին,

- ատենախոսության վերաբերյալ ՊՈՀ-ի անդամները տալիս են հարցեր և ստանում մագիստրոսի պատասխանները,
- կազմակերպվում է մտքերի փոխանակում,
- նախագահը հայտարարում է մագիստրոսական ատենախոսության պաշտպանության ավարտը:

Ատենաճառի համար մագիստրոսին տրվում է մինչև 20 րոպե ժամանակը:

ԱՈԱ-ի պաշտպանության ժամանակ ատենաճառում պետք է ներկայացվեն՝

- արդիականությունը,նպատակը,օբյեկտը,առարկան,վարկածը,
- խնդիրներն ու մեթոդները,
- աշխատանքի ծավալը,
- եզրակացություններ և առաջարկվող որոշումներ:

Մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանության ժամանակ ատենաճառում պետք է ճշգրտորեն ձևակերպվեն ատենախոսության թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակներն ու խնդիրները, հետազոտության օբյեկտի և առարկայի նկարագրությունը, աշխատանքի մեջ օգտագործվող հետազոտության մեթոդները:

- ՊՈՀ-ի որոշումներն ընդունվում են փակ նիստի ժամանակ հանձնաժողովի անդամների մեծամասնության որոշմամբ, հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պարտադիր ներկայությամբ: Ձայները հավասար լինելու դեպքում նախագահը (կամ նրան փոխարինող տեղակալը) որոշիչ ձայնի իրավունք ունի:
- Ավարտական որակավորման աշխատանքի պաշտպանության արդյունքները գնահատվում են ԿՓԵՀ-ի շրջանակներում՝ կրեդիտավարկանշային միավորներով, թվային և տառային համարժեքներով և հայտարարվում են նույն օրը ՊՈՀ-ի նիստերի քաղվածքները պատշաճ կերպով ձևակերպելուց հետո:
- Պետական որակավորման հանձնաժողովը որակավորման դրական արդյունքների դեպքում ընդունում է որոշում շրջանավարտին որակավորում (աստիճան) և պետական բարձրագույն մասնագիտական կրթությունը հավաստող դիպլոմ շնորհելու մասին:

- Հաշվի առնելով ՊՈՀ-ի աշխատանքների արդյունքները՝ նախագահը կազմում է հաշվետվություն:
- ԱՈԱ-ի պաշտպանության արդյունքում անբավարար գնահատական ստացած անձինք հեռացվում են ՀՊՄՀ-ից: ՀՊՄՀ-ում այդ անձանց վերականգնման դեպքում նշանակվում են ԱՈԱ-ի նոր թեմա, ղեկավար, գրախոս և խորհրդատուներ (անհրաժեշտության դեպքում): ԱՈԱ-ի կատարման և պաշտպանության ժամկետները նշանակվում են ռեկտորի հրամանով, այդ դեպքում էլ ԱՈԱ-ի կատարման և պաշտպանության կարգը պետք է համապատասխանեն սույն չափանիշին:

Խնդիրները, որոնք չեն քննարակվում սույն չափանիշի մեջ, լուծվում են համաձայն ՀՀ սահմանադրության, համապատասխան օրենքների և ՀՀ-ի կրթության և գիտության նախարարության կանոնակարգերի ու կարգերի:

Հավելված 1

ՄԱ-ի տիտղոսաթերթի օրինակ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ամբիոն_____

(թողարկող ամբիոնի լրիվ անվանումը)

Ա.Ա.Հ

Թեմա

Մագիստրոսական ատենախոսություն

Ներկայացված է՝ մագիստրոսի որակավորման հայցմանը «..... » մասնագիտությամբ .....մագիստրոսական ծրագրով

Ղեկավար/գիտ. կոչում _____

Երևան 2013

Հավելված 2

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մագիստրոսական ատենախոսության գնահատման չափորոշիչներ

ընդդիմախոսի համար

_____

Ուսանող (Ա.Ա.Հ.)

_____

Ամբիոն

_____

Մասնագիտություն

_____

Թեմայի անվանումը

_____

Ընդդիմախոս (Ա.Ա.Հ., գիտ. աստիճան /կոչում)

ԵՐԵՎԱՆ-2013

Հավելված 3

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մագիստրոսական ատենախոսության գնահատման չափորոշիչներ

ղեկավարի համար

_____

Ուսանող (Ա.Ա.Հ.)

_____

Ամբիոն

_____

Մասնագիտություն /կոդ

_____

Թեմայի անվանումը

_____

Ղեկավար (Ա.Ա.Հ., գիտ. աստիճան /կոչում)

ԵՐԵՎԱՆ-2013

Հավելված 4

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

Գնահատման բաղադրիչներ	**Գնահատման տոկոսաչափը**
Նախապաշտպանություն	20%
Գնահատում ղեկավարի կողմից	15%
Գնահատում գրախոսի կողմից	25%
Ներկայացում և պաշտպանություն	40%
	100%